

| | |
|---|-------------------------------------|
| ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՇՎԱՐԿ Եկամտային հարկի և կուտակային վճարի ամսական _____ (տարի) _____ (ամիս) | Փաստաթղթի մուտքագրման համար |
| | (լրացվում է հարկային մարմնի կողմից) |
| Աշխատողի նույնականացման տվյալներ | |
| Ազգանուն | Անուն |
| Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) | |
| Հաշվարկի ներկայացման ամսաթիվ՝ | Չափի միավոր՝ Դրամ |

1. «Փաստաթղթի համարը» մատուցում է հարկային մարմնում աշխատողի անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը, իսկ հետագա տողերում ինքնաշխատ լրացվում են ֆիզիկական անձի նույնականացման տվյալները. «Ազգանուն» և «Անուն» տողերում՝ աշխատողի ազգանունը և անունը, «Հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀ)» տողում՝ աշխատողի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը)

Բաժին I. Աշխատողի (այդ թվում՝ վարձու աշխատողի) եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարների հաշվարկ՝ ըստ գործատուների

| Գործատուի նույնականացման տվյալներ | | Հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա (ստացված) եկամտի գումար | | | | | | | Եկամտային հարկ | Պարտադիր կուտակային վճարներ | |
|-----------------------------------|------|--|---|------------|---|---|---------------------|---------------------------------|----------------|-----------------------------|---|
| Անվանում | ՀՎՀՀ | Քաղաքացիության և քաղաքացիության դասակարգիչ | Կուտակային համակարգի մասնակցության կարգավիճակ | Աշխատավարձ | Քաղաքացիական պայմանագրով աշխատանքի վարձատրություն | Ստացված ժամանակավոր անաշխատունակության նպաստներ | Այլ հարկվող եկամուտ | Հարկվող եկամտի նվազեցման գումար | Հարկի գումար | Աշխատավարձից | Քաղաքացիական պայմանագրով աշխատանքի վարձատրությունից |
| 1.1 | 1.2 | 1.3 | 1.4 | 1.5 | 1.6 | 1.7 | 1.8 | 1.9 | 1.10 | 1.11 | 1.12 |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| Ընդամենը | | | | | | | | () | | | |

2. 1-ին բաժնում տրվում է հաշվետու ամսվա համար (վարձու) աշխատողի եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարների հաշվարկը՝ ըստ բոլոր գործատուների (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր), յուրաքանչյուր գործատուի համար լրացվում է մեկ տող
3. [1.1] և [1.2] սյունակներում լրացվում են գործատուների նույնականացման տվյալները. [1.1] սյունակում՝ լրացվում է կազմակերպության անվանումը և կազմակերպության հարկավայրի անունը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը), իսկ [1.2] տողում՝ հարկ վճարողի հաշվառման համարը

4. [1.3] սյունակում ինքնաշխատ լրացվում է տվյալ գործատուի (վարձու) աշխատողի զբաղմունքի (պաշտոնի, մասնագիտության) կողք, [1.4] սյունակում ինքնաշխատ լրացվում է կենսաթոշակային համակարգում (վարձու) աշխատողի մասնակցության կողք (0՝ կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակից չէ, 1՝ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր մասնակից է, 2՝ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի կամավոր մասնակից է

5. [1.5] սյունակում նշվում է հաշվետու ամսվա համար տվյալ գործատուի վարձու աշխատողին հաշվեգրված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները (բազային եկամուտը), [1.6] սյունակում նշվում է հաշվետու ամսվա համար քաղաքացիաիրավական պայմանագրերով ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) դիմաց աշխատողին փաստացի վճարված եկամուտները (պայմանագրային եկամուտը), [1.7] սյունակում նշվում է վարձու աշխատողի ստացած ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարները (որոնք վճարվում են գործատուի միջոցների հաշվին և բյուջեից փոխհատուցման ենթակա չեն)

6. Վարձու աշխատողի համար [1.7] սյունակի լրացված լինելու դեպքում լրացվում (բացվում) է հետևյալ աղյուսակը՝

| Նպաստների և հետպահված նպաստներից վճարված եկամտային հարկի դասակարգման կող | Ժամանակավոր անաշխատունակության (հետպահման) | | Նպաստի գումար կամ նպաստի հետպահվող գումարից վճարված եկամտային հարկի գումար |
|--|--|-------------|--|
| | սկիզբ (օրը) | ավարտ (օրը) | |
| | | | |
| | | | |
| | | | |
| Ընդամենը | | | |

7. «Նպաստների և հետ պահվող նպաստներից վճարված եկամտային հարկի դասակարգման կող» սյունակում նշվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստների տեսակը կամ հետ պահված նպաստներից պահված եկամտային հարկի վճարման դեպքը (կողք). 1 - հիվանդության նպաստ, 2 - պրոթեզավորման նպաստ, 3 - առողջարանային բուժման նպաստ, 4 - հղիության և ծննդաբերության նպաստ, 5 - ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ, 6 - ավելի վճարված նպաստի գումարից վճարված եկամտային հարկ

8. «Ժամանակավոր անաշխատունակության (հետպահման) / սկիզբը (օրը)» և «Ժամանակավոր անաշխատունակության (հետպահման) / ավարտը (օրը)» սյունակներում նշվում են ժամանակավոր անաշխատունակության կամ հետպահման ժամանակահատվածը, ընդ որում՝ եթե գործատուն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր անաշխատունակության նպաստը վճարել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 14-ի N 1110-Ն որոշման 5-րդ հավելվածի 9-րդ կետով սահմանված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի հիման վրա (բացակայում է ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի վերջը), ապա որպես ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի վերջ լրացվում է յուրաքանչյուր անգամ ժամանակավոր անաշխատունակության թերթիկի գործատուին ներկայացնելու օրը՝ առանց փոփոխելու ժամանակավոր անաշխատունակության սկիզբը

9. «Նպաստի գումար կամ նպաստի հետպահվող գումարից վճարված եկամտային հարկի գումար» սյունակում նշվում է հաշվետու ամսում ժամանակավոր անաշխատունակության նպաստների վճարված գումարները կամ հաշվետու ամսում հղիության և ծննդաբերության արձակուրդին ընդհատվելու դեպքում վճարված նպաստի վերահաշվարկման արդյունքում ավելի վճարված եկամտային հարկի վերականգնման գումարները

10. [1.8] սյունակում նշվում է (վարձու) աշխատողին վճարված՝ [1.5], [1.6] և [1.7] սյունակներում չընդգրկված և «եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափով հարկվող այլ եկամուտները (այդ թվում՝ աշխատողին ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված չափը գերազանցող առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները, ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված չափերից ավելի վճարված փոխհատուցման վճարները, աշխատողին վճարված օգնության գումարները), [1.9] սյունակում նշվում է հարկվող եկամտի օրենքով սահմանված չափերը չգերազանցող կուտակային վճարների գումարները՝ ոչ ավելի, քան $((1.5)+(1.6)+(1.7)+(1.8)) - ((1.5)+(1.6)+(1.7)+(1.8)):1.05$

11. [1.10] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսում տվյալ գործատուի (վարձու) աշխատողի եկամտային հարկի գումարը հետևյալ հաշվարկից ելնելով՝

| Հարկվող եկամուտ | Եկամտային հարկ |
|----------------------------------|--|
| $[1.5]+[1.6]+[1.7]+[1.8]+ [1.9]$ | $[1.10]=([1.5]+[1.6]+[1.7]+[1.8]+ [1.9])\times 21\%$ |

12. [1.11] և [1.12] սյունակներում ինքնաշխատ լրացվում են հաշվետու ամսվա համար վարձու աշխատողի աշխատավարձից (բազային եկամտից) և քաղաքացիաիրավական պայմանագրերով ծառայությունների մատուցման (աշխատանքի կատարման) դիմաց աշխատողին փաստացի վճարված եկամուտներից (պայմանագրային եկամտից) վճարման ենթակա պարտադիր կուտակային վճարների գումարը հետևյալ հաշվարկներից ելնելով՝

| Կարգավիճակ | Եկամտի տեսակ | Հաշվարկ |
|---|--|---|
| կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակից չէ ([1.4]=0) | բազային և (կամ) հարկվող եկամուտ $((1.5)+[1.9])>=0, [1.6]+[1.9]>=0$ | $[1.11]=0$ և $[1.12]=0$ |
| պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի | միայն բազային եկամուտ $((1.5)+[1.9])>0$ և $[1.6]=0$ | $[1.11]=([1.5]+[1.9])\times 5\%$, եթե $((1.5)+[1.9])<=500000$, կամ՝ |

| | | |
|---|--|--|
| պարտադիր մասնակից ([1.4]=1) | | $(([1.5] + [1.9]) - 500000) \times 10\% + 25000$, եթե $([1.5] + [1.9]) > 500000$, իսկ $[1.12] = 0$ |
| | միայն հարկվող եկամուտ $[1.5] = 0$ և $([1.6] + [1.9]) > 0$ | $[1.12] = ([1.6] + [1.9]) \times 5\%$ (առանց պետության մասնակցության), իսկ $[1.11] = 0$ |
| | բազային և հարկվող եկամուտ $([1.5] + [1.9]) > 0$ և $([1.6] + [1.9]) > 0$ | $[1.11] = ([1.5] + [1.9]) \times 5\%$, եթե $([1.5] + [1.9]) \leq 500000$, կամ՝ $(([1.5] + [1.9]) - 500000) \times 10\% + 25000$, եթե $([1.5] + [1.9]) > 500000$, իսկ $[1.12] = ([1.6] + [1.9]) \times 5\%$ |
| պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի կամավոր մասնակից ([1.4]=2) | բազային և (կամ) հարկվող եկամուտ $([1.5] + [1.9]) > 0$ և $[1.6] = 0$, կամ՝ $([1.5] = 0$ և $([1.6] + [1.9]) > 0$ կամ՝ $([1.5] + [1.9]) > 0$ և $([1.6] + [1.9]) > 0$ | $[1.11] = ([1.5] + [1.9]) \times 5\%$ և $([1.12] = [1.6] + [1.9]) \times 5\%$ (առանց պետության մասնակցության) |

Բաժին II. Հարկվող այլ եկամուտներից եկամտային հարկի հաշվարկ

| Եկամտի և քաղաքացիության կոդ | Եկամտի ընդհանուր գումար | Դրույքաչափ (%) | Եկամուտները վճարողների թվաքանակ | Եկամտային հարկի գումար |
|-----------------------------|-------------------------|----------------|---------------------------------|------------------------|
| 2.1 | 2.2 | 2.3 | 2.4 | 2.5 |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

13. 2-րդ բաժնում տրվում է հաշվետու ամսում բոլոր տնտեսավարող սուբյեկտներից տվյալ ֆիզիկական անձի ստացած հարկվող այլ եկամուտներից եկամտային հարկի հաշվարկը, յուրաքանչյուր եկամտի տեսակի և քաղաքացիության համար լրացվում է մեկ տող

14. [2.1] սյունակում նշվում է հաշվետու ամսվա համար [2.2] սյունակում նշված եկամտի և եկամուտը ստացողի քաղաքացիության կոդը (LՂՀ (ՀՀ) քաղաքացի կամ օտարերկրացի՝ օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ), [2.2] սյունակում լրացվում է հաշվետու ամսվա համար հաշվեգրված այլ եկամտատեսակների գումարները (որոնք հարկվում են առանձին դրույքաչափերով), [2.3] սյունակում նշվում է ընտրված եկամտին և քաղաքացիության կոդին համապատասխանող եկամտային հարկի դրույքաչափը, [2.4] սյունակում նշվում է [2.2] սյունակում նշված եկամուտները վճարողների թվաքանակը (հաշվարկում չի մասնակցում) և [2.5] սյունակում լրացվում է եկամտային հարկի գումարը ($[2.5] = [2.2] \times [2.3]$)

| Եկամտի տեսակ | Եկամտի կոդ | Դրույքաչափ | Եկամտի կոդ | Դրույքաչափ |
|----------------------------------|-------------------|------------|-------------|------------|
| | LՂՀ (ՀՀ) քաղաքացի | | Օտարերկրացի | |
| 1. Ռոյալթի | 001 | 6% | 101 | 10% |
| 2. Տոկոս | 002 | 5% | 102 | 10% |
| 3. Շահում | 003 | 21% | 103 | 21% |
| 4. Մրցանակ | 004 | 21% | 104 | 21% |
| 5. Նվիրատվություն, օգնություն | 005 | 21% | 105 | 21% |
| 6. Ապահովագրական հատուցում | 006 | 21% | 106 | 5% |
| 7. Գույքն օտարելու դիմաց եկամուտ | 007 | 6% | 107 | x |

| | | | | |
|--------------------------------------|-----|-----|-----|-----|
| 8. Գույքի արժեքի հավելված | 008 | x | 108 | 10% |
| 9. Վարձավճար | 009 | 6% | 109 | 10% |
| 10. Փոխադրման (ֆրախտի) դիմաց եկամուտ | 010 | 21% | 110 | 5% |
| 11. Ֆիզ. անձի համար ապահովագրավճար | 011 | 21% | 111 | 21% |
| 12. Կամավոր կենսաթոշակներ | 012 | 6% | 112 | 6% |
| 13. Այլ եկամուտներ | 099 | 21% | 199 | 21% |

Բաժին III. Ամփոփ տվյալներ

| Եկամտային հարկի գումար (հաշվարկված) | Հետ պահված նպաստների գումարներից վճարված եկամտային հարկի վերականգնում | Եկամտային հարկ (վճարման ենթակա) | Պարտադիր կուտակային վճարներ՝ ընդամենը |
|-------------------------------------|---|---------------------------------|---------------------------------------|
| 3.1 | 3.2 | 3.3 | 3.4 |
| | () | | |

15. 3-րդ բաժնում տրվում են հաշվետու ամսում բոլոր գործատուներից տվյալ ֆիզիկական անձի ստացած (ստացման ենթակա) հարկվող եկամուտներից եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարների հաշվարկի ամփոփ տվյալները

16. [3.1] սյունակում ինքնաշխատ ([3.1]=[1.10]+[2.5]) լրացվում է հաշվետու ամսվա համար հաշվարկված եկամտային հարկի ընդհանուր գումարը, [3.2] սյունակում լրացվում է հետ պահված նպաստներից վճարված եկամտային հարկի վերականգնման գումարը, [3.3] սյունակում ինքնաշխատ ([3.3]=[3.1]+[3.2]) լրացվում է հաշվետու ամսվա համար վճարման ենթակա եկամտային հարկի ընդհանուր գումարը [3.4] սյունակում ինքնաշխատ ([3.4]=[1.11]+[1.12]) լրացվում է հաշվետու ամսվա համար վճարման ենթակա պարտադիր կուտակային վճարների հանրագումարը

Հարկ վճարողի ստորագրություն